


26.609

Биорес

Нимнагыр 7-мм
шагыр 7 бр



26 JUN 2013

05 JAN 2010

Մ-39 ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԵՄ.

«Եթուք ովկ էք», — հարցնում է ժողովուրդը սոցիալիստներին, զարմացած՝ լսելով մեր ճառերը և կասկածամտութեամբ դիտելով մեր կոփերը։ Խօնչ ոյժ է ծնում այդ մարդկանց, որոնք բանի տեղ չեն դնում ամենքի կողմից ձանաշուած սրբութիւնները։ Խօնչ ոյժ է նրանց կուսի մղում ամբողջ աշխարհի և այն մարդկանց գէմ, որոնց ձեռքին է գտնուում իշխանութիւնը։

Անշուշտ, որեէ մէկի չար հնարագիտութիւնը,
որեէ մէկի խելառ քմահաճոյըը չէ մեղ կեսնքի
կոչել: Բանւոր դասակարգի աշխատանքից է ծնուել մեր
շարժումը, սոցիալիստական շարժումը:

Սիր շըջանում կան տմեն տեսակ հասարակական
դիրք ունեցող մարդիկ: Միանման չէ այն ճանապարհը,
որով ամեն մէկը դիմում է դէպի սոցիալիզմը: Մէկին
աղքատութիւնը մանուկ օրերում օրօրոցի երգ է երգում,
իսկ մի ուրիշը ջերմ ու հոգատար պայմանների մէջ է
անցկացնում իւր տարիները: Մէկը իւր մտքերն է որո-
ւում մեքենաների հոնդիւննի տակ, մի ուրիշը բանտի
խեղդող խցիկում իւր հաշվիներն է մաքրում այն հասա-
րակութեան հետ, որ նրան գուրս չպրտեց իւր շըջանից՝
աղատ մտքի և խիզախ ձգտումների համար: Նայեցէք
որևէ գետի և մաքովի բաժանեցէք նրա ջրերը միլիոնա-
ւոր կաթիլների. իւր առանձին պատմութիւնն ունի ա-
մեն մի կաթիլը, որ տարբեր ճանապահով է գոյանում,
նախ քան ընդհանուր հոսանքին խառնուելը: Բայց այնու-
ամենայնիւ այդ միլիոնաւոր կաթիլներից բաղկացած
ջերն ապրում են մի ընդհանուր կեանքով, և կայ գետը
կազմող մի ընդհանուր պատճառ, որ տալիս է նրան
ինքնուրոցն կեանք. դա նրա կատաղի, անզուսպ հոսանքն է:

5960-55

Ճիշտ այդպէս էլ իր կեանքովն է տպրում բազմապիսի հոսանքներից կազմուած մեր սոցիալիստական շարժումը, և կայ նրան ծնունդ տուող մի ընդհանուր պատճու:

Այդ պատճառը բանոր դասակարգի կեանքի պայմաններն են:

Ներկայ մարդկութեան անէծքը կազմող աղքատութիւնն է ծնել սոցիալիստական շարժումը: Աղքատութիւնը, սր կաշկանդում է մարդու միտքը, որ հոգին է հաւասարեցնում նրա ամենանու իրական զգացմունքները, որ ծանր բեռան տակ ձնչում է նրան,—այդ աղքատութիւնն է ահա ծնունդ տուել այն ձգտումներին և այն բողոքին, որ սոցիալիստները տարածում են աշխարհով մեկ:

Աղքատութիւնն է ստեղծել ներկայիս բոլոր տանձանքները, այլանդակել միինանաւոր մարդկանց, յորդ արցունքով է ողողել աշխարհը և արիւնով պայմանաւորել մարդկութեան ամեն մի քայլը. աղքատութիւնն է լեցրել բանտերն ու անառականոցները. Հարիւր հազարաւոր մարդկանց աղքատութիւնն է քշել արուարձանների վարակուած թաղերը, միմեանց վրայ խանել ստորերկեայ նկուղներում և կաուըների տակ, ամայի և անպտուղ է դարձրել գիւղական գաշտերը. աղքատութիւնն է թունաւում մանկական տարիները և խաւարեցնում ծերութեան վերջին օրերը. նա է մեր երկիրը դժուկը դարձրել, մարդկանց իրար գէմ թշնամութեամբ զինել և չարութեամբ նրանց հոգին վարակել: Բայց չէնց այդ աղքատութիւնն էլ մարդկանց զլխում առաջ է բերել մտքի գործունէութիւն, սրտերում՝ վրդովմունքի զգացմունք, և վշտից ուժառապառ եղած ձեռներով բարձրացըրել հարիւր հազարաւոր ու միինանաւոր կուսի պատրաստ ձեռ.

Ներ. աղքատութիւնն է մարդկանց պարգևել սոցիալիզմի մարտական գէնքը:

Կոմիւ աղքատութեան դէմ. կոմիւ այն ամենի դէմ, ինչ որ մարդու ձնչում է, քամում, այլանդակում է և գաղանացնում:

Ուսա աչն կոչը, որ աշխարհի բոլոր սոցիալիստներին մի եղայրական ընտանիքի մէջ է համախմբում:

Կոմիւ աղքատութեան դէմ: Բայց աղքատութիւն կայ, աղքատութիւն էլ: Անցեալում գոյութիւն ունեցող աղքատութեան դէմ կար միայն մի գէնք. դա յամառ աշխատանքն էր, և այդ գէնքը միշտ փրկարար չէր թըշւառութեան հանդէպ: Մեր նախորդներն անդուլ աշխատանքով էին ձեռք բերում իրենց գոյութեան միջոցները, և բաւական էր մի դժբախտութիւն,—ինչպէս օրինակ հեղեղ, երաշտ, համաճարակ, թշնամու յարձակումն,—որ պրել տանէլը նրանց երկարամեայ վաստակի արդիւնքը: Եւ ամենքի համար անխուսափելի, ընդհանուր թշուառութեանը յաջորդում էին բարեյաջող տարիներ: Մարդու աշխատանքը հազիւ էր կարողանում կեանքը պահպանել, և ընդհանուր թշուառութիւնը հետևանք էր աշխատանքի թոյլ զարգացման: Թշուառութեան հանդէպ չը կար ոչ մի զարման, և մարդիկ ասում էին, թէ թըշւառութիւնն «Աստծուց է գալիս», այսինքն՝ իրենց համար անըմբոնելի բնութեան կոյր ուժերից:

Բայց դարեր անցան, և իշխող բնութիւնն, իր հերթին, մարդկութեան ստրուկը դարձաւ: Իրար յաջորդող անթիւ սերունդների յամառ աշխատանքն իր գործը տեսաւ, և այսօրուայ ժողովուրդներն ստեղծել են հասարակական այնպիսի անսպառ հարստութիւն, որ կարող էր ապահովել ընդհանուր երջանկութիւնը և վերջ տալ աղքատութեանը: Անցան այն ժամանակները, երբ որեւէ



դժբախտութիւն կարող էր ոչնչացնել մի ամբողջ սերնդի աշխատանքով ձեռք բերած արդիւնքը: Մարդկային աշխատանքը տիրացաւ բնութեան ուժերին, և կտարելադործուած մեքենաների, գոլորշու, ինչպէս նաև ելեքտրականութեան չնորհիւ մարդը կարող է արտադրել այնքան, որ ապահովէ ամենքի գոյութիւնն՝ առանց կարիքի: Երկաթուղիներն ու հեռախօսները իրար հետ կապեցին աշխարհի բոլոր անկիւնները, և մի երկրի բնական հարստութիւնները գուրս են տանում՝ օգտագործելու ամենքի համար: Այն բոլոր դժբախտութիւնները, որ մարդուց անկախ լրայ են հասնում, այլ ևս չեն կարող զրկանք պատճտուել և ամբողջ երկրի ազգաբնակութիւնը դատապարտութեան, սովոր ու մահուան: Նախորդ սերունդների աշխատանքը լիուլի ապահովել է ներկայ սերնդին, իսկ վնրջինիս սեփական աշխատանքն օր աւուր ստեղծում է աւելի, քան սպառել կարող էր նա, եթէ նոյնիսկ կրւշտ փորով տաէր և դոհացումն ապար իր բոր պահանջներին:

Բայց չը նայած դրան, աղքատութիւնը գոյութիւն ունի և այն էլ՝ աւելի մեծ շափով, քան անցած դարերում: Միլիոնաւոր անտուն-անտեղ, առողջ բանորներ կարօտ են հացի, ապնովուած չեն վաղուայ համար: Հարվեր հազարաւոր մարդիկ ստիպուած են գորութիւն անել և մարդասպանութիւն, որ քաղցից չը մեռնեն: Հարիւր հազարաւոր ծեր ու մանուկներ ստիպուած են ձեռք պարզել՝ ողորմութիւն խնդրելու, հարիւր հազարաւոր կանաք հարկադրուած են ծախել իրենց մարմինը, հասրիւր հազարաւոր երեխաներ գլուխ դնելու տեղ չունին և, մինչգեռ հազիւ են խօսել սկսում, արդէն ծանօթ են լինում կարիքից ծնուած բոլոր ցաւերին: Այլ ևս չը կայ ամենքի լրայ հաւասարապէս իշխող ընդհանուր թշուա-

ռութիւնը, որպիսին կրում էին մեր նախորդները: Բայց դրա փոխարէն կայ և իւրաքանչիւր ժամ կըրկնապատկւում է թշուասութիւնն ա՛յն դասակարգի, որ ստեղծում է հասարակական ամբողջ հարստութիւնը: Եւ թշուառների ստեղծած օր աւուր աճող հարստութեան հետ՝ աւելի է սաստկանում աղքատութիւնը:

Հայց տուէք ձեզ, ո՞րտեղ է թաքնուած աղքատութեան պատճառը, ձեր կանանց ու երեխայոց զրկանքների և տանջանքների արմատը: Դուք գիտէք պատճառը. խիստ երկարատև ու ժանր աշխատանքը կարճ ժամանակուայ մէջ ուժասպառ է անում բանուորին և ժամանակից առաջ նրան ինվալիդ (աշխատանքի անընդունակ) դարձնում. աշխատանքը վարձատրւում է աննշան չափով, և աշխատավարձը բաւարարութիւն չի տալիս կեանքի ամենամեստ պահանջներին: Աշխատանքն ապահովուած չէ, և իւրաքանչիւր բանւոր գիտէ, որ իւր կեանքի մի մասը դատապարտուած է լինելու անգործութեան, հետեւաբար և քաղցի: Բայց չնչին վարձատրութեան համար գործ գըրած անգուլ աշխատանքի չնորհիւ՝ բանւորն անգօր է գառնում զօրեղ ախրոջ առաջ և ստիպուած լինում հպատակուել նրա առաջարկած պայմաններին: Իսկ տիրոջ ոյժը կապիտալի մէջ է՝ հասարակական հարստութեան, որը կենդրոնացած է կապիտալիստների ձեռքում: Եւ որքան արագ է աճում այդ հարստութիւնն ու խոշոր կապիտալիստների ձեռքը կենդրոնանում, այնքան զօրեղանում է կապիտալի ճնշումը բանւորների վրայ, այնքան դժուարութեամբ են վերջիններս իրենց հացը վաստակում և ազատ ժամանակ ձեռք բերում: Հարստութիւնից է ծնուած աղքատութիւնը, և բանւոր մասսաների աշխատանքով ստեղծուած հարստութիւնը կապիտալիստների ձեռքին զէնք է գառնում աւելի ևս աղքատացներու

այդ մասսաներին:

Իսկ ինչ բան է անգործութիւնը՝ բանւոր դասակարգի այդ պատուհասը՝ Նրա համար է առաջանում անգործութիւն, որ ոչ մէկին պէտք չէ ձեր աշխատանքը, որ պէտք չեն ձեր արտադրած ապրանքները: Աշ. այն միջոցին, երբ հարիւր հազարաւոր մարդիկ կարիք ունին մեծաքանակ մթերքի, -բանւորներն անգործ են մնում, այն ինչ նրանք կարող էին արտադրել այդ մթերքները: Այն միջոցին, երբ մեքենաները զուր տեղ այս ու այն կողմն են ընկնում՝ գործ ճարելու, մինչդեռ նրանք կարող էին բան գցել կանգ առած մեքենաները: Ի՞նչ է զրա պատճումը: Այն, որ ապրանքներն արտադրւում են այն դէքքում միայն, երբ այդ ապրանքները կարելի է ծախել կապիտալիստների համար ցանկալի շահով: Պարզ է ուրեմն, որ երբ շահի ետեից ընկած կապիտալիստները մեծ քանակութեամբ ապրանք են արտադրում, որանց գները վերջի վերջոյ ընկնում են, որովհետեւ ապրանքների քանակը չի համապատասխանում գնողների պահանջին: Նըման դէքքերում կապիտալիստները կրծատում են արտադրութիւնը, որով և վրայ է համում կրիզիսն ու անգործութիւնը: Ահազին հարստութիւն դիմելու հնարաւորութիւնը, որի մասին երազել անգամ չէին կարող մեր նախորդները, ծնում է համ բանւոր մասսաների աղքատութիւնը: Սիդամէս է մեր օրերի աղքատութիւնը, որ առաջացել է ոչ թէ մարդկային ուժերի պակասութիւնից, այլ հէնց մարդկային ուժերի և աշխատանքի զարգացումից: Հարունակ աճող հասարակական հարստութեան մէջ են թաղուած աղքատութեան ալմատները:

Անցեալում մարդկի աղքատ էին, բայց ոչ մէկը միւսից աւելի աղքատ չէր, ոչ մէկը դատապարտուած չէր՝

մշտապէս աղքատ մնալու: Իսկ այժմ մէկի աղքատութիւնը հանդիսանում է իրեկ աղքիւր՝ մէկ ուրիշի հարստութեան, և ոմանց հարստութիւնն էլ գառնում է աղքիւր՝ ուրիշների աղքատութեան:

Հասարակական հարստութեան աճեցումն ու հասարակական պայմաններն են առաջ բերել այն աղքատութիւնը, որից ծնունդ է առել սոցիալիզմին հասնելու համար մղուղ կուրը: Հենց այդ աղքատութիւնն էլ առաջ է բերել չքաւորների վրդովմունքը, և սոցիալիզմը՝ խորացնելով այդ վրդովմունքը՝ լրաւորում է նրանց գիտակցութիւնը և ցոյց տալիս կոուի նպատակն ու միջոցները:

Մենք սոցիալիստներս բանւոր մասսաների մէջ հանդէս չենք գալիս, իրեկ կողմնակի մարդիկ: Մենք եկել ենք՝ ցոյց տալու նրանց այն, ինչ որ թաքնուած է հէնց իրենց ծոցում, մենք եկել ենք ցոյց տալու բանւոր մասսաներին իրենց գրութիւնն ու այդ գրութիւնից բղխող թշուառութեան էութիւնը:

Սոցիալիզմն ասում է.՝մարդկութեան խոշոր մեծամասնութիւնը՝ բացի իր զոյգ աշխատող ձեռներից՝ շունի կենսական որեմէ միջոց: Բայց այդ աշխատող ձեռները կարող են օգտակար գործ գտնել իրենց համար այն զէպքում միայն, երբ թոյլ տան օգտուելու արտադրութեան բոլոր անհրաժեշտ միջոցներից (հողից, մեքենաներից և հումք նիւթերից): Իսկ արտադրութեան այդ միջոցները գտնուում են՝ կամ բնութեան մէջ, կամ ձեռք են բերուած նախկին աշխատաւոր սերունդների ջանքերով: Բայց դրանք գտնուում են փոքրաթիւ մարդկանց ձեռքում, և արտադրութեան միջոցներից օգտուելու իրաւուքի համար՝ այդ փոքրաթիւ մարդկի բանւորներից խլում են նրանց սշխատանքի ամենամեծ բաժինը:

Այն, ինչ որ այսօր արտադրում է բանւորը, և

հաշուելով նրան տրուելիք աշխատավարձը, կազմում է գործատիրոջ շահը, մեծացնում նրա կասլիտալը, որպէսզի վաղը գործադրուի՝ նոր բանւոր վարձելու, նրան միենոյն շահազործութեանը ենթարկելու համար։ Բանւորներն իրենց սեփական աշխատանքով են օտեղում այդ շահազործութիր կապիտալիստների սյժը, և իւրաքանչիւր կատարելագործուած արտադրութեան արդիւնքի մեծ մասը կապիտալիստի գրապանն է գնում, ահա թէ ինչն է կրկնապատկւում նրա ոյժն ու հարստութիւնը։ Աղքատութիւնը ծընւում է հարստութիւնից, իսկ հարստութիւնն առաջ է բերում նար աղքատութիւն, որոյնիւած խոշոր կապիտալիստը ոչ միայն իր բանւորներին է շահագործում, այլ և պարտքի ցանցերով կաշկանդում է սեփական տնտեսութիւն ունեցող խեղճ ու կրակ գիւղացիներին, խանութպաններին, արհեստուորներին։ իւր համեմատարար էժան ապրանքներով գուրս է զցում նրանց ապրանքը և քայֆայում այդ խեղճերի տնտեսութիւնը, գարձնելով նրանց սեփականազուրկ բանւորներ։ Այսպէս ուրեմն մի կողմից կազմում է վարձու բանւորների վիթխարի դասակարգը—ալրոխտարհատը, որին վիճակուած է տառապել մինչև կեանքի վերջը՝ հաց ու աշխատանք ճարելու համար։ իսկ միւս կողմից առաջ է գալիս կապիտալի տէր փոքրաթիւ մարդկանց մի փոքրիկ խմբակ—ըուրժուագիան, որ իր ձնուքներ է առնուած սեփական մի մասը։ Պրոլետարը կուում է և այն ժամանակ, երբ ակամայ է աշխատում, որպէսզի խնայել կարողանայ մի կտոր հացի համար։ Կապիտալիստին վաճառած իր ուժերի մի մասը։ Պրոլետարը կուում է և այն միջոցին, երբ առան կապիտալիստի կողմից նրան չնորդուած հանգստի ժաման կարգում է՝ մտաւորապէս բարձրանալու, ելք նա իր սուզ միջոցներից մի քանի կոպէկ յետ է ձըգում։ երեխաններին ուսում տալու, որովհետեւ գիտութեան ամեն մի շոգը պրոլետարին գործուուր է դարձնում վարձու սուրուկներ։

Պրոլետարիատ և բուրժուազիա, սեփականազուրկ բանւորներ և հարուստ սեփականազուրկներ—ահա սրանք են ժամանակակից հասարաւութեան երկու գլխաւոր դասակարգերը։ Եւ այս երկու դասակարգերի միջն տեղի է

ունենում անընդհատ կրիւ՝ պրոլետարիատի ձեռքով արտադրուած արդիւնքի համար։

Դասակարգը գասակարգի դէմ։ Բուրժուազիան, որպէսզի իր եկամուտն անվերջ կրկնապատկէ, որպէսզի յաւագոյն մեքենաների գործածութեամբ ստացած յաւելեալ արժէնքն իր գրապանը լեցնէ, շարունակ ձգտում է պակասիցնել բանւորի աշխատավարձը և աւելի աշխատանք կորզել նրանից։ Նա խում է բանւորի ազատ ժամանակը, զրկում նրան հանգստութիւնից, ստրկացնում է նրա կընոյն ու երեխաններին, դարձնում նրան անբան անասուն։ Բոկ պրոլետարը, որպէսզի կարողանայ պահպանել իր գոյութիւնը, որպէսզի փոքր ի շատէ ապահովի իւր ընտանիքը, որպէսզի փոքր ի շատէ մարդավայել կեանք վարի, կուի է մղում աւելի կարճ բանւորական օրուայ, աւելի բարձր աշխատավարձի և լաւ վերաբերմունքի համար։ Նա կուում է իւրաքանչիւր րոպէ, տուանց այդ կուիւը նկատելու, կուում է իւր դասակարգի թշնամու դէմ, որ ձգտում է նրա բոլոր ուժերն աստադրական շահի աղբիւր դարձնել։ Պրոլետարը կուում է և այն ժամանակ, երբ ակամայ է աշխատում, որպէսզի խնայել կարողանայ մի կտոր հացի համար։ Կապիտալիստին վաճառած իր ուժերի մի մասը։ Պրոլետարը կուում է և այն միջոցին, երբ առան կապիտալիստի կողմից նրան չնորդուած հանգստի ժաման կարգում է՝ մտաւորապէս բարձրանալու, ելք նա իր սուզ միջոցներից մի քանի կոպէկ յետ է ձըգում։ երեխաններին ուսում տալու, որովհետեւ գիտութեան ամեն մի շոգը պրոլետարին գործուուր է դարձնում կապիտալիստի գէմ մղած կրուի մէջ։ Պրոլետարը կուում է կապիտալիստի գէմ նոյնիսկ այն ժամանակ, երբ իր բերնից կտրելով՝ հազնեւում է և ապրում, թէկուզ արտաքուստ, «ինչպէս ապրում են մարդիկ», այսինքն նրա թըշ-

նամիները—բուրժուազիան. Երբ զարդարում է «գերմանական» զգեստով և կնոջն է զարդարում «քաղաքավարի», որովհետև «պարզ ժողովրդական» հագուստի հետ միասին՝ նա դէն է շպառում ճորտական ստորնացումի այն մնացորդը, որ անհարժեշտ է իրեն շահագործողներին, և որն արտայայտում է մինչեւ անգամ հագուստի մէջ էլ: Պրոլետարի ամբողջ էութիւնը, նրա մարմինն ու հոգին, միտքն ու մկաններն ըմբուստանում են ստրկական վիճակի դէմ, որի մէջ պահում են նրան այսօրուայ բուրժուական կարգերը. կարգիր, որոնք հիմնուած են միլիոնաւորների աղքատութեան վրայ, սրոնք հարստութիւն են բաշխում մի քանի հազար մարդկանց միայն: Պրոլետարն իր ամբողջ էութեամբ ծառս է լինում այդ կարգերի դէմ. և ներկայիս այսպէս կոչուած «հասարակական կարգերը» ոչ այլ ինչ են, բայց եթէ մի ահռելի մեքենայ՝ կանխորդուած նրա համար, որ օրէնքների և սուսիկանութեան, ժանդարմների ու բանդերի, զինուրական ուժի և եկեղեցական քարոզների միջոցով սունձած պահէ պրոլետարի ըմբոստ գոյութիւնը:

Հարուստների և կուշտերի, բախտաւորների և պատարոյծների (պարապ-սարապ) դասակարգը—բուրժուազիան յարատե կոռուի մէջ է՝ իւր դասակարգային թրշնամիների—պրոլետարիատի դէմ: Երբ բուրժուան, ըստ երեսյթին առանց որևէ կարիքի, առանց անձնական շահերի, ճնշում է և սոնակոխ անում պրոլետարի մարդկային արժանապատութիւնը, երբ անբարոյականացնում է նրա կնոջն ու աղջկան, երբ նոյնիսկ բարեգործութեան դիմակի տակ կոսէկներ է շարտում,—նա այդ բոլորի մէջ հնազանդում է իր բնազդին (անգիտակից, պղտոր զգացմունքին), իսկ այդ բնազդը զրդում է նրան՝ աւելի ու աւելի խորացնելու բուրժուայի և նրա թշնամու-պրո-

իտարի միջն ընկած անդունդը, աւելի ու աւելի մղելու պրոլետարին դէպի անբան անտունի փիճակը. անասունի, որ կուրօրէն հնազանդում է իւր տիրոջ կամքին:

Գիտութեան նուաճումները, գեղարուեստական հաճոյը և կատարելագործուած տեխնիկայի բոլոր յարմարութիւնները գտնուում են բուրժուայի ձեռքին. դրանց միջոցով նա խրոխտանում է պրոլետարի հանդէպ՝ ամրապնդելու նրա ստրկական միճակը և դարձնելու նրան իր ժառանգական ճորտը:

Դասակարգը դասակարգի դէմ: Եւ սոցիալիզմը գալիս է աշխարհին ցոյց տալու դասակարգերի այդ մղեգին պայքարը, որ մղում է ամսն տեղ, ուր բաղմապատկւող հարստութիւնից լայն ծաւալ է ստանում աղքատութիւնը. այսինքն ամեն տեղ, ուր իշխում է վարձու աշխատանքը, ուր գործարանների խողովակները սև ծուխ են ժայթքում և շոգեկառքերն ապրանք տեղափոխում հեռաւոր վայրեր: Սոցիալիզմը ցոյց է տալիս այդ անողոք պայքարը, որի մէջ հարիւր-հազարաւորներ ընկնում են աննկատելի մահով, որի մէջ մինչև այժմ յաղթաղ է հանդիսացել նա, ով կոռուի է գուրս եկել լաւագոյն զէնքով: Իսկ լաւագոյն զէնքը մինչև այսօր շահագործողների ձեռքումն է եղել: Նրանք համախմբուել են ու կազմակերպել արնախումների մի մեծ ընտանիք, ժողովուել են պետական իշխանութեան շուրջը, տիրանում են ահռելի հարստութեան, որով ձեռք են բերում նաև գիտութիւն: Նրանք դիտմամբ ճնշում են բանւոր դասակարգը, սահմանում են օրէնքներ, որոնց պէտք է ենթարկուի նա. կառավարութիւնն առանձնապէս սուհծում են պրոլետարիատի համար, խուռ նրանից ամենառուժեղ տղամարդկանց, լիցնում զօրանոցներ, դահիճ դարձնում, ինչպէս նաև բանտային պահապաններ: Բուրժուազիան կազմակերպուած է և գի-

տակցօրէն է կուր մղում պրոլետարիատի դէմ, որն անդիտակցաբար, տարտամ զգացմունքով, ճիզ է գործ դընում՝ ազատուելու ստրկութիւնից:

Եւ սոցիալիզմն ասում է պրոլետարիատին, ես չեմ եկել նրա համար, որ տանեմ քեզ իմ ճամբով, այլ ցոյց տալու ամին ճանապարհը, որով դու արդէն աննկատելի կերպով շարժում ես առաջ. եկել եմ քեզ ցոյց տալու այդ ճանապարհի վերջնական կէտը և օդնելու, որ կարեմ եղածին չափ՝ ջնուտ անցնես ճամբառ՝ չնչին գոհերով։ Դու պէտք է հասկանաս ինքու քեզ, հասկանաս քո. դրսութիւնը և իմաստն այն կոռուի, որ մղում ես ամբողջ էռոթեամբդ ժամանակակից կարգերի դէմ։ Գալիս եմ մօտդ՝ ոչ իբրև օտար, անծանօթ մէկը. ես միմիայն պայծառ լուսոյ ճառագյթներն եմ ձգում քո ճանապարհին և լուսուրում քո ապագան։ Հասկացի՞ր, որ զու թշնամու բանակում ես, որ քո շուրջն ամենուրեք կուին է բորբոքում, գիտակցի՞ր այդ կոռուի իմաստը և կոռուի՞ր այն խորը համոզմամբ, որ պակասում է միլիոնաւոր բանւորներին՝ յաղթահարելու միքանի հազար պորտաբոյծների։

Սոցիալիզմը պրոլետարներին ամենից առաջ ասում է կազմակերպութեցէ՛ք։ Թշնամին զօրեղ է, և մարդկային արիւն-արցունքից ու քրտինքից գոյացած նրա զօրութիւնը—հարստութեան եւ իշխանութեան զօրութիւնն—անխնայ կերպով ջախջախում է բոլոր իր դէմ բմբոստացողներին։ Միայն միլիոնաւոր աշխատող ձեռնեների միւթիւնը, ըազմաթիւ պրոլիտարների կամքի և մտքի միւթիւնը կարող է խորտակել այն զօրութիւնը, որ սնւում է և աճում ձեր աշխատանքով։ Կազմակերպւեցէ՛ք։

Դասակարգը դասակարգի դէմ։ Սոցիալիզմը բան-

ւորներին ասում է. կազմակերպուելիս և դասակարգային կուր մղելիս՝ ազատուեցէ՛ք դարաւոր նախապաշտումների ազգեցութիւնից. այն հայեացքներից ու մըտքերից, որ սովորեցնում են ձեզ ձեր թշնամիները։ Երբ կը խօսեն հետներդ կը օնիկի անունից, պատասխանեցէ՛ք. պրոլիտարները մէկ կրօն ունին, այդ՝ դասակարգային կերպուի, ստրկութիւնից ազատագրուելու, ինչպէս նաև մարդու երջանկութեան համար մղուող կուուի կրօնն է։ Զեր թշնամիներն աշխատում են իրանց դէմ մղած կուիւը մթագնել և ձեր միտքն օրօնել այն ցնողքով, թէ հանգերձեալ կեանքում ձեր բանւորական պարտականութիւնն անտրտունջ կատարելու համար՝ լիառատ վարձատրութիւն կ'ստանաք. գուք այդպիսի դէպքերում պատասխանեցէ՛ք. երջ և նկութիւն մենք այս երկրի իրայ ենք ուզում, ազատուեցէ՛ք ձեր միտքը թթացնող կրօնից և բուրժուազիային ծախուած քահանաների ու վարդապետների քարոզներից։ Զեր թշնամիները կամենում են ձեզ իրարից անջատել, մի երկրի բանւորներին գրգռելով միւս երկրի բանւորների դէմ, մի ազգութիւն՝ միւսի. օրինակ ուսւաներին՝ հրէաների, ւհների, գերմանացիների ու տաւարիցիների, անզիւացիների ու ճափոնացիների դէմ, և ընդհակառակը։ Լաւ իմացէք, որ դասակարգային կուիւը բորբոքում է ամենուրեք՝ բանւորների և բուրժուազիայի միջն, և որ զանազան երկրների պրոլետարների ու ազգերի անջատումը կը թուլացնէ նրանց ոյժը և կը հեշտացնէ մեր թշնամիների յաղթանակը։ Իմացէք, որ ամբողջ աշխարհի բուրժուաները միանում են, երբ անհրաժեշտ է լինում կուուել բանւորների դէմ։ շահագործողների այդ միութեանը հակալիք բանւորների համերաշխութիւնը. բանւորների՝, որոնք ունին մի ընդհանուր նպատակ—ազատագրուել շահագործումից։ Ճափոնացին

ների, հրէաների, լեհերի, գերմանացիների, աւստրիացիների և անգլիացիների դէմ ձեզ պատերազմի կոչելիս՝ պատսախանեցէք. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»—դասակարգը դասակարգի դէմ՝ ամբողջ աշխարհում, Ամերիկայից մինչև Ճափոնիա:

Դասակարգը դասակարգի դէմ: Սրա մէջ է բանւորական շարժման ողջ էւթիւնը, սրա մէջ է հազարաւոր տարիներ մարդկութեան անցած ճանապարհի էւթիւնը: Անցեալում էլ մի դասակարգը կուռում էր միւսի դէմ, ճնշուածի ճնշողի դէմ: Խրաքանչիւր դասակարգ աշխատում էր ձեռք բերել և օգտ ոգործել այն բարիիները, որ արդիւնք էին մարդկային յարստի աշխատանքի: Բայց չը նայած որ մինչև օրս էլ մի դասակարգ բունում էր միւսի տեղը և տիրում նրա հարստութեանը, իր ձեռքն էր առնում պետական իշխանութիւնը և ազատուուժ նախկին տիրոջից,—այնուամենայնիւ ճնշումը ըստ վերացաւ երկրի երեսից: Օքինակ բոլոր եւրոպական երկրներում ազնուական-կարուածատէրերի իշխանութիւնը վարուց է տեսել տուել վաճառական-բուրժուայի իշխանութեանը: Ինքնակալ ազնուական թագաւորների փոխարէն՝ պարլամենտներում^{*)} հրապարակ եկան բուրժուազիայի ներկայացուցիների՝ յանձին ընտրուած մինիստրների (ինչպէս Ֆրանսիայում) կամ պարլամենտներից կախումն ունեցող թագաւորների (ինչպէս Անգլիայում, Իտալիայում և ուրիշ երկրներում): Եւ ճիշտ այդպիսի յեղաշրջում, այդ տեսակ յեղափոխութիւնն, որ չինունիկ ների և ազնուականների տեղ՝ իշխանութեան գլուխն է կանգնեցնում բոլոր հարուստներին—բուրժուազիային, կատարում է նաև մեզ մօտ՝ Ռուսաստանում, ուր ժողովուրժը թօթափել է ուզում ներկայ ինքնակարութեան ծանր լուճը^{**)}: Բայց իշխանութեան այդպիսի փոփո-

^{*)} Ըստրուածների ժողով, որը հրատարակում է օրէնքներ և հըսկում մինիստրների գործ սանէութիւնը:

^{**)} Այս բրոշիրը տպագրուել է 1906 թուին, ելլր գեռ ևս զօրեղ էր միապետութիւնը: (Դ. Մ.):

խութեամբ դեռ չի վերացուի աղքատութիւնը: Նախկին ճնշողների տեղը բունում են ուրիշները, որովհետեւ ճնշման բուն պատճառը մնում է անշարժ. այսինքն՝ ունեւորների թալանած հասարակական հարստութիւնը յափշշտակիչների ձեռքն է մնում: Փողովուրդը փոխում է իւր տէրելին, բայց ինքն առաջուայ պէս նոյն ճնշուած դասակարգն է մնում: Նախկին ճորտ գիւղացին դառնում է վարձու բանւոր՝ քաղաքում և գիւղում: Զինովինիկներին և բոնակալներին տապալող յեղափոխութիւնը բանւորներին քաղաքացի է դարձնում, տալիս է նրանց միքանի իրաւաներներ, առանց, սակայն, բանւորներին իրենց աշխատանքի տէրը գործնելու:

Բայց երբ պրոլետարիատն իւր վրայից դէն շպրտէ բուրժուազիայի տիրապետութեան լուծը, երբ ազատագրուի վարծու աշխատանքից, միայն և միմիայն այդ դէպքում ընդ միշտ կանհետանան՝ աղքատութիւնը, թըշւառութիւնը, ստրկութիւնն ու դժբախտութիւնը: Նթէ պրոլետարիատը կամենում է ազատուել աղքատութիւնից, պէտք է անի այն, ինչ որ չի արել ուրիշ ոչ մի դասակարգ: Պրոլետարիատը տանջնում է նրա համար, որ իւր աշխատանքի չնորհիւ կուտակող հասարակական հարստութիւնն անցնում է տառանձին մասնաւոր սեփականատէրերի— կապիտալիստների ձեռքը: Ուրեմն այն ժամանակ միայն կը վերացուի աղքատութիւնը և դադար կառնէ պրոլետարների կուիը, երբ հասարակական հարստութիւնը մնայ հէնց իրենց արտադրող բանւորների ձեռքում: Բայց գրան կարելի է հասնել մէկ ճանապարհով միայն, այսինքն՝ բուրժուազիայի ձեռքից պէտք է խլել պետական իշխանութիւնը, արտադրութեան բուլոր միջոցները (հողն ու մեքենաները) և այդ ամենը դարձնել ընդհանուրի սեփականութիւնը, որից և կոգտուեն բոլոր մարդիկ: Սյափիսով միայն կը վերանան-



դասակարգերը, շահագործողներն ու շահագործուղները՝
աղքատներն ու հարուսաները. մի խօսքով մարդկութիւնը
կազմատուի աղքատութեան ճիրաններից: Եւ պրոլետա-
քիատը բռւրժուայի դէմ կռուի դուրս գալով, անշեղ գը-
նում է դէպի այդ կէտը, դէպի սոցիալիստական հա-
սարակակարգը:

Բարձրացնելով պրոլետարիատի կռուի գրօշակը՝ աղ-
քատութեան վրայ հիմնուած հասարակակարգի դէմ՝ սո-
ցիալիստական կռուակցութիւնը (սոցիալ գեմոկրատիան)
ցոյց է տալիս նրան այդ կռուի վերջնական նպատա-
կը. և բոլոր երկների բանւորները համախմուրելով այդ
գրօշակի տակ, կազմում են աշխատանքի մի հզօր բա-
նակ, —առանց գաւանանքի, լեզուի ու ցեղի խորու-
թեան, —ամենուրեք միւնոյն կռիւը մղում, որպէսպի ի-
րենց վիճակը բարելաւեն, իրաւունք և ազատութիւն ստա-
նան, պէտութեան մէջ իշխանութիւն ձեռք բերեն և
սոցիալիզմի իրականացնել կարողանան:

Սոցիալիզմովատիան չի գալիս՝ փրկելու բան-
ւորներին, չի խոստանում որևէ հրաշք, չի խոստանում
ծովը հրդեհել: Բանւոր գասակարգի միա ու արիւնից ե-
լած՝ նա ասում է. այն կռիւը, որ մղում ես գու, ինքդ
շատ անգամ չը նկատելով, ամբողջ մարդկութեանն աղ-
քատութիւնից, տղիտութիւնից և ճորտութիւնից ազա-
տագրող մեծ կռիւն է զա: Ըմբռնիք ուրեմն այդ կռուի
իմաստը և, ըմբռնելով, քայլիր դէպ այն նպատակը, որ
քո կեանքը զրել է առջեղ: Պրոլետարիատի ներկայ աղ-
քատութիւնից է ծնունդ առնում ընդհանուր եղբայ-
րութեան եւ հաւասարութեան զաղափարը, դասակար-
գերի անողոք կռուով է աշխարհը գիմում դէպ այն հասա-
րակակարգը, որ չի ճանաչի՝ ոչ տէր, ոչ ստրուկ: Եւ պրո-
լետար կեանքի մոայլ իրականութեան վրայ արդէն բաց-
ում է վառ արշալոյսը տանջուով մարդկութեան:

Կը բացուի այդ արշալոյսը, և կանհետանան մարդ-
կութիւնը ճնշող բոլոր մութ ուժերը—ցուրտն ու քաղցը,
նախատինքն ու ոճիրը, տղիտութիւնն ու անցանքը:

Կը բացուի այդ արշալոյսը, որի անունն է՝ համաշ-
խարհային սոցիալիստական յեղափոխութիւն:

ՍՈՅ. ԴԵՄ. ՀՐԱՑԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹՔԻՆ «Բ. Ա. Ն Ի Ծ»

by Spec. Spec.

Laju bu mbuh

- № 1. Սրբակոյսի երգեր։ Գ. Հայկունի, գինն է 25 լ.
 № 2. Ինչպիսի ընտրողական իրաւունք է հարկաւոր բան-
 որ դասակարգին։ Բ. Գնունեանց 15—լ.
 № 3. Դասակարգը դասակարգի գէմ
 և. ՄՈՒԾՈՎԵՐ

15—*l*

Տպագրութեան

- № 4. Կորչին սոցիալ-դեմոկրատները՝ բրակել:

ԳԻՒՆ Է 15 — ԿՈՉ.

“Тифлъ” Тифлъсъ Аптекарскій магазинъ Кешишянъ противъ памятъ Воронцова 4-тий редакція „ПАЙКАРъ“

«Ազգային գրադարան



NL0204440

